

ՆԻՒԹԵՐ

ՀԱՅԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԵՒ

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳՐԻԶ ՄԱՆԳԱՍԱՐԵՆՑ

(1415 - 1502)

Բաղմարդիւն եւ մեղուաջան զընչ մը եղած է Յովհաննէս Մանգասարենց, զրեթէ անօրինակ՝ մեր զընչներու պատկանելի շարքին մէջ: Իր մասին անգամ մը ասկէ տարիներ առաջ զրած էի, երբ գեռ չունէի ներկայ ընդարձակ նիւթերս¹:

Լ. Խաչիկեան անոր կեանքի շրջանը կը նշանակէ 1419-1505²: Ան կ'ընդունի, որ Յովհ. Մանգասարենց «Վախճանուել է 86 տարեկան հասակում» 1505 թուականին, կամ զրանից մի-երկու տարի առաջ³: Ասոր համար իբր աղբիւր ունեցած է Երեւանի թիւ 5256 զընչաղբիւր Աւետարանը⁴ զրուած Յովհ. ի աշակերտ Զաքարա զընչէն, ԶԾԴ (1505)ին, «ի դաւառս Վասպուրական, ի քաղաքս Վան», որուն յիշատակարանին մէջ, զոր իր կարգին պիտի տամ, Զաքարա կը վկայէ իր ուսուցիչ Յովհ. Մանգասարենցի մասին, «որ հանգեալ ի Քրիստոս 22 (86) ամաց»: Խաչիկեան՝ բնական հաշուով՝ հանելով 86ը 1505 թուականէն, նկատած է 1419ը իբր Յովհ. Մանգասարենցի ծննդեան թուական:

Սակայն իր յիշատակարանին մէջ, 1505ին, Զաքարա ոչ մէկ տեղ կը յիշէ որ իր ուսուցիչը իրապէս այդ 1505 տարւոյն մէջ մեռած է: Գրչազիւրը կրնար զրուած ըլլալ անոր մահունէն մէկ երկու տարի ետքն ալ: Ատիկա նկատի ու-

նենալով՝ Խաչիկեան, ինչպէս տեսանք վերը, կ'աւելցնէր որ Մանգասարենց կըրնար վախճանած ըլլալ 1505ին, «կամ զրանից մի-երկու տարի առաջ»:

Արդարեւ կան որոշ վկայութիւններ, նոյն իսկ Մանգասարենցի զընչէն, որ ցոյց կու տայ թէ իր մահը պէտք է նշանակել 1502ին՝ քան թէ 1505ին:

Յովհ. Մանգասարենց զրած է Մաշտոց-Գանձարան մը 1485ին, որ այժմ մաս կը կազմէ Վենետիկի Ս. Ղազարի հաւաքածոյին եւ կը կրէ թիւ 1210 համարը: Մանգասարենց 1485ի իր այդ զընչութեան յիշատակարանին մէջ կը վկայէ որ «եւ զի Հ (70) տարոյ եմ». այսինքն, 1485ին՝ 70 տարեկան էր: Ուրեմն անտարակոյս ծրնած ըլլալու էր 1415ին, որպէսզի 1485ին ըլլար 70 տարեկան: Արդ, եթէ 1485ին 70 տարեկան էր, եւ մեռած կը նշանակուի 86 տարեկան, մենք 1485ին վրայ պէտք է աւելցնենք այդ 16 տարիներու տարբերութիւնը, որով կը ստանանք 1502ը իբր Յովհաննէս Մանգասարենցի մահուան թուական:

1. Արարատ, 1945, թիւ 8-9, Պաշտոն Այրէս:

2. Ժե. Գաբի Հայերէն Զեռագրերի Յիշատակարաններ, Ա. մաս, Երեւան 1955, էջ 759, Բ. սիւն:

3. Անդ, էջ 587:

4. Անդ, էջ 587:

* * *

Յովհաննէս Մանգասարենց իր ձեռագիրներու յիշատակարաններուն մէջ յաճախ կը յիշէ իր ծնողքը, հայրը՝ Մանգասար, եւ մայրը՝ Փաշա կամ Փաշամելիք: 1437ի յիշատակարանին մէջ (թիւ Ա.) Յովհաննէս կ'ըսէ «մարմնաւոր ծնողաց իմոց հաւրն իմոյ Մանգասարի եւ մաւրն իմոյ հանդուցեալն ի Քրիստոս եւ միւս մաւրս իմոյ»: Հոս հաւանական կ'երեւի որ Յովհաննէսի հայրը՝ Մանգասար ամուսնացած էր երկրորդ անգամ, առաջին կնոջ մահէն ետք:

Յովհաննէս Մանգասարենց 1445ին կը յիշէ իր հօր՝ Մանգասարի հանդուցեալ ըլլալը (յիշատակարան Դ.): Որեւէ տարակոյս չկայ որ 1450ին իր հայրն ու մայրը մեռած էին: Կը կարծեմ որ Մանգասարի առաջին կինը մայրն է Յովհաննէսի, որուն մահուան մասին ան կը վկայէ արդէն 1437ին:

Յովհաննէս Մանգասարենց կամ Մանգասարենց առաջին անգամ ինքզինքը այդպէս կը կոչէ 1441ին (Յիշ. Բ.):

Յովհաննէս ունեցած է քոյր մը, որուն որդին կը յիշէ 1457ին իբր «Գրչազիւրդին իմ զՄարգարայ սրբաւէր կրօնաւորն» (Յիշ. Թ.):

Յովհ. Մանգասարենց ամուսնացած էր Ծուքրանի հետ, սակայն ե՞րբ, դժբախտաբար ան չէ նշանակած: 1468ին, սակայն, իր յիշատակարանին մէջ (թիւ ԺԵ.) ան կը յիշէ «կենակցին իմոյ զնացելոյն առ Աստուած Ծուքրանին»: Որով, 1468ին մեռած էր կինը: Կը յիշէ երկու որդիները մահացեալ. «Իմ սիրական որդիքն Սահակ ու Մեսրոպ զիս սեւեցին» (Յիշ. Ի.): Ուրեմն 1450ին արդէն ամուսնացած եւ երկու զաւակ դնէ ունէր Յովհ. Մանգասարենց: Իսկ 1470ին «որ ի զրել Շարակնոցիս Բ (2) տղայ ինձ յաստուած դնաց՝ Մէհէրն եւ Սահարբէկն, վա՛յ ինձի»: Շարակնոցի զընչութեան տեսողութեան է որ մահացեր են իր երկու որդիները: Նոյն յիշատակարանին մէջ աւելի վերջ կը զրէ մահտարածմի մը մասին, որ աւերներ զործեր է տղոց մէջ, եւ կ'ա-

ւելցնէ «աչքս կուրացել է ի բաղում լաւոյս, մէջքս կոտորել է, ձեռք թուլացել է, զի իմ մէկ որդին Միթար զողորմելի հայրս սեւեց յայս աւուրքս, եւ ես մնացի անյիշատակ» (Յիշ. Թիւ ԺԷ): Ուրեմն Մէհէրն եւ Սահարբէկի, Յովհ. Մանգասարենցի այս երկու տղոց մահունէն ետք կ'երեւի թէ իր միակ մնացեալ որդին՝ Միթար ալ զոհ գացեր է մահտարածմի, եւ Յովհ. Մանգասարենց անորդի մնացեր է («եւ ես մնացի անյիշատակ»): Ասկէ ետք, ան այլեւս չի յիշեր իր զաւակները, նոյնիսկ իբր «հանդուցեալ», թէեւ կը յիշէ իր ծնողքը:

* * *

Իր ծննդեան վայրը կրնայ ըլլալ Արճէշ: 1456ին Աղարիա Արքեպիսկոպոսի համար գրուած Մաշտոցին մէջ, որ այժմ մաս կը կազմէ իմ հաւաքածոյիս, ան կը զրէ. «զանարժան զրիչս զՅ(ո)վ(անէ)ս քահանայ) յԱրճէշոյ աղաչեմ յիշել ի տ(է)ր» (էջ 70ը): Սակայն ոչ մէկ տեղ նշանակած է իր ծննդեան վայրը:

1437ին, ըստ ճաշոցի յիշատակարանին, (թիւ Ա.) կը յիշէ սարկաւազ ըլլալը եւ ձեռագիրը «քաջ եւ տիեզերալոյս վարդապետիս Թովմայ»ի հետը գրած ըլլալը: Հոս յիշուած Թովմա վարդապետը՝ Թովմա կամ Թումա Մեծոփեցիին է, որ կ'երեւի թէ Յովհ. Մանգասարենցի ուսուցիչը եղած է: Յովհ. Մանգասարենց ասկէ ետք երբեք առիթ չի փախցնէր յիշելու իր զընչութեանց յիշատակարաններուն մէջ իր վարդապետը: Գրչութիւնը, ինչպէս յիշատակարանը որոշ ցոյց կու տայ, կատարուած է «ի քաղաքս Արճէշ, ընդ հովանեաւ ամենամաքուր Աստուածածնիս՝ եւ պատերազմի սուրբ Նշանիս»: Գրուած Մահապի Ամիրփաշայի համար: Ողբացեալ Մկրտիչ Սրբազան Աղաւնուռնի այս ճաշոցին յիշատակարանը օգտագործած է⁵ սխալաշատ կերպով: Օրինակ, զընչութեան թուականը նշանակած է 1433, ըստացոյցին անունը՝ Ամիրփաշայ, զընչու-

5. Միսթանգ եւ Այցելուք Հայ Երուսաղէմի:

ւանական կրնա՞յ ըլլալ, որ 13-14 տարեկան Յովհ. Մանգասարենց զրջագրած ըլլայ Յայսմաւուրքի պէս մեծածաւալ զըրջադիր մը: Ամէն պարագայի տակ, Միւնիխի թիւ 6 ձեռագիր ժամագիրքի եւ Պատարագամատոյցը, ըստ իր յիշատակարանին, «Ներսէս սուտանուն կրանաւորս ցանկացաւ եղէ աստուածային բուրաստանիս, և եռափափազ եւ տենչալի հայցմամբ խնդրեցի յաստուածաբան վարդապետէն եւ քաջ բարունապետէն Թովմայէ: Վասն որոյ ըստ բնածին բարուցն եւ հայրական ղթոյն խոնարհեցաւ յաղաչանս տառապելոյս եւ ինքն շնորհեաց զբարութիւն եւ ետ զբել իւր ձեռնասուն աշակերտացն՝ Մկրտիչ վարդապետին եւ Յովհաննէսին եւ Ջաքարիային եւ ելից զտենչումն փափաղանաց իմոց: Վասն որոյ զըրեացէ վնա տէր Աստուած եւ զաշակերտան իւր՝ յաւիտենական դիրն եւ յանվախճան ուրախութիւնսն, ամէն: Եւ արդ զրեցաւ սա ի թվականիս Հայոց ՊԶԱ (1432), ի հրեշտակարնակ յանապատս եւ ի հրաչափառ ուխտս Մեծոփայ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, եւ սուրբ Յակոբ հայրապետիս, եւ սուրբ վարդապետաց գերեզմանացս առ ոտս նախասացեալ (Թովմա Մեծոփեցի) բարունապետիս»¹¹: Գրեցաւ ծաղկողը կը յիշէ «գերանաչընորհ զարհալիսկոպոսն զտէր Մկրտիչ Ամթայ», որ նաղաչն է: Ես ամենայն վստահութեամբ հոս յիշուած գրիչը Յովհաննէս նոյն իսկ Մանգասարենցը կը ներկայեմ, և աստով աւելի հաւանական կ'ըլլայ 1428ին գրեալ Յայսմաւուրքին գրչին նոյնպէս Յովհ. Մանգասարենց ըլլալն: Գուցէ եթէ Յայսմաւուրքը իր ամբողջ յիշատակարաններով հրատարակուած ըլլար, հոն կրնար յիշուած ըլլալ նաեւ զըրջակիցներ այդ զրջութեան, եւ աստիճան մը եւս հաստատուած կ'ըլլար մեր կարծիքը:

1432էն ուրիշ զրջագիր Մաշտոց մը ունի սա յիշատակութիւնը. «Արդ, ես... Մկրտիչ սոսկանուն վարդապետս եղէ ցանկացող աշամ աստուածաշունչ կտալիս, որ կոչի Մաշտոց: Ետու գրել զսա

սիրելի եղբոր մեր հոգեւոր եւ սրբաւէր քահանայի Կարապետի»... եւ կը շարունակէ. «Գարձեալ, աղաչեմ յիշել ի բարին Քրիստոս զերջանիկ եւ զքաջ հոգեւորն եւ զտիեկերալոյս բարունին ղթովմայ, որ զօրինակն շնորհեաց եւ բազում բարութիւնս եցոյց մեզ: Նաեւ զհոգեւոր եղբայրս մեր՝ զգրոց աշակերտեալ անձինս ղՅովհաննէս կրօնաւոր, որ ղեօթն օրէնքն գրեաց եւ ղյիշատակարանս գրոցս, եւ ըզՀայրապետ կրօնաւորն, որ զգիրս կազմեաց, նաեւ զհոգեւոր որդեակս իմ զՄիւնաս զպիրն, որ զգիրս ծաղկեաց»... և այլն¹²: Ստացողը՝ վերը յիշածս Մկրտիչ վարդ. Մեծոփեցին է. իսկ Յովհաննէս կրօնաւորը որ «ղեօթն օրէնքն գրեաց եւ ղյիշատակարանս գրոցս», անտարակոյս մեր Մանգասարենցն իսկ է: Լ. Ս. Պաշիկեան յիշատակարանս արտատպած է իր մեծարժէք զործին մէջ, զրջութեան վայրը նշանակելով Արճէշ: Արդարեւ յիշատակարանը շարունակելով կը կարդանք «... զրեցաւ սա ի թուականութեանս Հայոց ՊԶԱ (1432) ... ի թագաւորութեան աշխարհաւեր եւ անիմաստ Աքանտարին, եւ ի հայրապետութեան տեառն Կոստանդեայ, եւ յեպիսկոպոսութեան տէր Յովհաննիսի, յերկիրս Քաջբերունի, ի քաղաքս որ կոչի Արճէշ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս եւ սուրբ Յակոբիս»: Գուցէ աւելի ճիշտ պիտի ըլլար, նկատի առնելով Սր. Աստուածածնի եւ Սր. Յակոբի տաճարներուն յիշատակութիւնը՝ տեղը Մեծոփայ վանքը նշանակել, ուր էր Յովհ. Մանգասարենց:

Ան, ուրեմն, Մեծոփայ վանքին մէջ

11. Յուցակ Միւնիխէնի. կազմեց Հ. Գ. Վ. Գալեմբերեան, էջ 19: Լ. Ս. Պաշիկեան արտատպելով այս յիշատակարանը՝ ԺԵ. Գաբի Հայրէն Ջեռագրերի Յիշատակարաններ, Ա. մաս, Երեւան 1955, էջ 423-4՝ սխալմամբ «Գրիչ՝ Ներսէս» նշանակած է: Ներսէս լոկ ստացողն է. իսկ գրիչներն են Մկրտիչ վրդ. (անշուշտ Մեծոփեցին); Յովհաննէս (Մանգասարենց) եւ Ջաքարիա:

12. Նոտարք Հայոց, էջ 100-101: Պաշիկեանի ԺԵ. Գաբի յիշատակարաններ, Ա. մաս, էջ 424-5:


Թովմա Մեծոփեցիի ուսուցչութեամբ սորված է զրջագրել: 1437ին սարկաւազ ըլլալը կը յիշէ (Յիշ. Ա.): Սակայն 1441ին արդէն քահանայ է (Յիշ. Բ.):

Յովհաննէս Մանգասարենցի դասակից կամ զործակից եղած են ԺԵ. զարու մեր զրջութեան բազմաթիւ աշակերտը ղէմքերը: Բացի իր մեծանուն ուսուցիչէն, Թովմա վրդ. Մեծոփեցիէ, ան կը յիշէ իրեն զրջակից եւ դասակից Մկրտիչ վրդ. Մեծոփեցի, որ զործակից եղաւ Թովմայի՝ Մեծոփայ համալսարանին մէջ, Ջաքարիա, որուն մասին աւելի բան մը չենք գիտեր:

1432ին, Յովհ. Մանգասարենց տեսած է իր զրջագրած ձեռագրին ծաղկուելը Մկրտիչ Նաղաչ արքեպիսկոպոս Ամթեցիէ: Նոյն տարին, իր զրջակցած մէկ Մաշտոցին կազմուելը տեսած է Հայրապետ կազմողէ, որուն կողմէ կազմուած է այս Մաշտոցը և 1421ին ալ Աւետարան մը Սուխարայ (Սառաբստայ) վանքը, եւ զուցէ Թաւրիղի 2. 48, 1421ին գրուած ձաշոցին կազմը: 1432ին, նոյն այդ Մաշտոցը ծաղկուած է Մկրտիչ վրդ. Մեծոփեցիի հոգեւոր որդի Միւնաս զպրէ, որ յետոյ բազմարդիւն ծաղկող մը եղաւ, որուն մասին այլ առթիւ: 1441ին Յիսուս Որդի իր զրջութեան (Յիշ. Բ.) չորս պրակը գրած է Ղազար գրիչ, որ անտարակոյս Ղազար սարկաւազ գրիչն է, որ գրած է Վիկենայի թիւ 428 ժամագիրքը Մեծոփայ վանքը եւ անդ կը յիշուի 1410-1435 թուականներուն: 1441ին Մկրտիչ քահանայ «նկարողի» համար կը գրէր ձաշոց մը (Յիշ. Գ.): 1445ի իր գրած Աւետարանը կը ծաղկուի Միւնասէ: 1450ին կը գրէր Աւետարան մը Վարդան գրակապի կամ կազմարարի համար, որդի Աւետարանի, որմէ մեղի հասած են ինը կազմեալ զրջագրեր 1427-1453, եւ զուցէ ուրիշներ ալ, որոնք անձանթ կը մնան: 1450ի Աւետարանը նկարուած է Մանուէլ նկարողէ, որմէ մեղի հասած են նաեւ 1452էն եւ 1459 նկարեալ Աւետարաններ եւ ձաշոց մը 1458էն, ինչպէս նաեւ Մարտիրոս քահանայ նկարողէ, որմէ ուրիշ ծաղկեալ

զործ ցարդ անձանթ կը մնայ ինծի: Դարձեալ 1454ին գրած Աւետարանը, ինչպէս նաեւ Ազարիա Արքեպիսկոպոսի համար գրած (մասամբ) Մաշտոցը՝ Միւնաս նկարած է: 1456ի Մաշտոցին Յովհ. Մանգասարենցի զործակցած են Մկրտիչ, Միւնաս եւ Յովսափ գրիչները: 1457ին կը նշանակուի զրջութիւնը Երեւանի թիւ 1755 Յայսմաւուրքին, որուն գրիչ Յովհ. Մանգասարենցի զրջակցած է Կարապետ գրիչ:

Այսպէս 72 երկար տարիներ զրջութեամբ գրագած է Յովհ. Մանգասարենց: Իր աշակերտներէն Ջաքարա, 1505ին, կ'աւարտէր Աւետարան մը, որուն Յովհաննէս մասը ձերունի վաստակաւոր գրիչը գրած էր իր մահէն առաջ: Ջաքարա կը վկայէ իր ուսուցիչ Յովհ. Մանգասարենցի մասին թէ «գրեալ եղեւ ձեռամբ նոյն իսկ թէ «գրեալ եղեւ ձեռամբ նոյն իսկ, Խ (40) Յայսմաւուրք եւ Տարեգիրք,



Գրչ. Յովհ. Մանգասարենցի:
Մաշտոց 1458էն: Ձեռ. Ս. ՂԳՐ. Բ. 1210:

ձառ եւ Սարգիս զիրք: Իսկ փոքր զիրք, տետր, աղօթամատոյց, շարականոց եւ սաղմոսարան, Մաշտոց եւ զանձարան Ծ-Կ (50-60), եւ այլ աւելի, եւ Աւետարան ԼԲ (32)» (ՅԻԶ. ԻԳ.):

Ուրեմն, գոնէ 132 զրչազիր զրած է ան, այսինքն տարին զրեթէ երկու ձեռագիր: Բնական է այս 132ին մէջ հաշուելու է զրչազիրութեամբ զրեալներն ալ: Արդ, մեզի հասած են 13 եւ 1 մասնակի Աւետարան, երկու մասնակի Ժողովածոյ, 3 եւ մէկ մասնակի Ճաշոց, 2 Շարական, Ժամագիրք Պատարագամատոյց, մասնակի զրչազիրութիւններ, եւ 23 ամբողջական զրչազիրներ: Ամբողջութեամբ 32 զրչազիրներ իր զրչէն բոլորովին կամ մասնակի, եւ եթէ ասոնց վրայ աւելցնենք նաեւ 1428ի կարծեցեալ Յայամաւորքը, այն ատեն հազիւ 33 զրչազիր հասած է մեզի Յովհ. Մանգասարենցի 132 զրչազիրներէն: Արդ, մեզի հասած կ'ըլլայ հազիւ մէկ չորրորդը մեր հնագոյն զրչազիրական հարստութեան: Որով մեզի հասած 20·000 զրչազիրները մաս կը կազմէին գոնէ 80·000 զրչազիրներու, որոնց 60·000ը ի սպառ փճացեր կորսուեր են: Այս ահարկու իրականութիւնը ա'լ աւելի սարսափելի կ'ըլլայ, երբ նկատի առնենք որ ԺԵ. դարուն զրուած 132 զրչազիրներէն միայն 32 մեզի հասեր են. կորուստը աւելի հին դարերէն՝ բնական է շատ աւելի խոշոր համեմատութեամբ պիտի ըլլար, եւ կրնանք առանց դժգոյն իսկ չափազանցութեան՝ ըսել որ Ե. դարէն մեր զրչազիրներուն ամբողջական կորուստը մինչեւ մեր օրերը հաշուելու ենք առ նշանակ 100·000 կամ 125·000 զրչազիր: Ի՞նչ հսկայական կորուստ...:

Յովհ. Մանգասարենցի 32 Աւետարաններէն միայն 13 հատ հասեր են մեզի, եւ հատ մըն ալ մասնակի: Ուրեմն Աւետարաններու պէս յարգուած եւ պահուած, ընտիր զրչութեամբ եւ անտարակոյս՝ ծաղկումով զրչազիրներէն 20 հատ փճացեր են, 1450ական թուականներէն մինչեւ մեր օրերը: 40 Յայամաւորքներէն հաստատ կերպով միայն իրմէ մասնակի զրչութիւն Յայամաւորք մը հասեր է: Արդարեւ զժուար է ինծի ասկէ աւելի ահաւոր, չմեցուցիչ մշակութային կորուստ երեւակայել: Հաւանաբար, իրմէ՝ հոս ու հոն նոր զրչազիրներ ալ գտնուին գեո. սակայն պէտք է յիշել, որ իր մեզի հասած իր զրչազիրներէն ոմանք միայն յիշատակութեամբ ծանօթ են, եւ անոնց պատահածէն լուր մը չունինք, ինչպէս օրինակ Ջմիւռնիացի Սիմէօն Գառնիկեանի Աւետարանը կամ Լեւոն Մսերեանցի քով ի Մոսկուա տեսնուած Ժողովածոն, կամ թէ «Թորոս Աղբար»ի եւ «Նօտարք Հայոց»ի մէջ յիշուածները:

(Շար. 1)

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

1900 ՏԱՐՈՒԱՆ

ԱՒԱՆԳԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Չնքուշի հայերն ունէին դարաւոր սովորութիւն մը, որ կը կոչուէր «լծի տակէն անցընել»:

Հայաստան ներգաղթած եւ ներկայիս Սփիւռքի մէջ վտարանդի ապրող Չնքուշի բոլոր հայերը չեն կրնար մոռնալ այդ սովորութիւնը, որովհետեւ անիկա մաս կը կազմէ իրենց մանկական, զարոյցական անմոռանալի, յաւիտ փայփայելի, ամենանուիրական յիշատակներուն:

Այդ սովորութիւնը ի դարձ կը զրուէր խորական խաղերու, ի մասնաւորի Չիկիւն կոչուած խաղին մէջ:

Չիկիւն ծնկախաղ եւ արմկախաղ մըն էր, աւելի ճիշտը՝ ծնկներու եւ արմուկներու կռիւ, ծնկներով եւ արմուկներով պատերազմ: Չնքուշի հայերուն ինքնատիպ, առանձնապատուկ խաղերէն մին, որ կը խաղցուէր երկու հակառակորդ խումբերու կողմէ, որոնք զոյգ թիւով անգամներէ կը բաղկանային, առնուազն ճական, երբեմն մինչեւ 10-12ական:

Կոռուղ խումբերէն մին կը մղէր յարձակողական եւ միւսը՝ պաշտպանողական կռիւ: Պաշտպանողական կռիւ մղող խումբը կ'ունենար հէլ (goal - նշանակէտ) մը, որուն շուրջ կը դառնար կռիւ: Հէլը կը խորհրդանշէր հայրենիք, զոր կը պաշտպանէր կոռուղ խումբերէն մին եւ զրաւել կ'ուզէր միւսը: Կոռուղ խումբերը կը խորհրդանշէին տարրեր ազգեր:

Այլ խօսքով՝ մանրանկար պատերազմ մըն էր, զոր կը մղէին Չիկիւն խաղացող խումբերը:

Չնքուշի Ս. Կարապետ Եկեղեցւոյ ընդարձակ բակին մէջ, Եկեղեցւոյ Ս. Մես-

րոպ զարոյցի աշակերտներու Չիկիւն խաղին հէլը կը կազմէր Եկեղեցւոյ հարաւային պատին տակ, աւազանի մատուռին վրայ նայող պատուհանին մօտ գտնուած տապանաքարերէն մին: Ի՞նչ զիտնայինք, ո՞վ մտքէն կ'անցընէր, թէ այսպէս տաք մուտադան (աստ-անդ ցրցքնուած) պիտի ըլլայինք, յաւիտենապէս պիտի զրկուէինք այդ սրբութիւններէն, որ խելք ընէինք այդ տապանաքարերու վրայի արձանագրութիւնները կարգալու: Ինչ թիւ միշտ այնպէս կու գայ, որ Չիկիւնի մեր հէլը տապանաքարն էր Չնքուշի Յովհաննէս Գ. եպ. առաջնորդ-վանահօր (1788-1792), որ իր շատ կարճ պաշտօնավարութեան շրջանին, շատ խոշոր շինարարութիւններ է կատարած - վանքին մէջ աղբիւր է բերեր, վանքին մեծ օտան (դահլիճ) է կառուցեր, Չնքուշի դետակին Եղերքի (խանտակ) վանապատկան քաղաքներէն մին ծախու է առեր եւ երկու քաղաքներուն ալ ջուրն է շատցուցեր... եւ թաղուած է «Չնքուշի մէջ, Ս. Կարապետ Եկեղեցւոյ հովանոյն տակ» (Թորոս Աղբար, Բ. էջ 463):

Չիկիւնի պատերազմը կը մղուէր երկու հակառակորդ կողմերու միջեւ հետեւեալ կերպով:

Յարձակող կողմի զինուորները իրենց ձախ ոտքը վեր բարձրացուցած, եւ աջ ոտքին ետեւէն իրենց աջ ձեռքով անոր բթամատն ամուր բռնած, ամէն կողմէ արշաւելով՝ յարձակման կը ձեռնարկէին՝ փորձելով յառաջանալ դէպի հէլը եւ զրաւել զայն:

Իսկ պաշտպանողական կռիւ մղող կողմ-